

**Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

**«ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական
ընկերություն**

31 դեկտեմբերի 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևանի Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնադրքի» (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀՀՄՄԽ կանոնագիրք), որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՄԽ կողմից հրապարակված ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է

խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլնտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամոռեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեկավարի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Լիլիթ Բաղդասարյան
Առաջադրանքի ղեկավար

18 մարտի, 2026թ.



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Հասույթ մատուցված ծառայություններից	5	3,655,727	3,381,485
Կոմիսիոն վճարների տեսքով ծախսեր		(1,255,628)	(950,257)
Անձնակազմի գծով ծախսեր		(250,777)	(201,132)
Մաշվածություն և անորտիզացիա	9, 10	(55,844)	(39,176)
Ծրագրի սպասարկման ծախսեր		(23,916)	(14,933)
Պարտքային կորուստների գծով ծախս	12, 13, 14	(20,042)	(238,277)
Այլ գործառնական ծախսեր	6	(77,577)	(52,702)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,971,943	1,885,008
Այլ եկամուտ		150	33
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից զուտ օգուտ (վնաս)		73,373	(52,514)
Ֆինանսական եկամուտ	7	102,996	28,314
Ֆինանսական ծախսեր	7	(659,746)	(729,775)
Շահույթ մինչև հարկերը		1,488,716	1,131,066
Շահութահարկի գծով ծախս	8	(269,775)	(252,821)
Տարվա շահույթ		1,218,941	878,245
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,218,941	878,245

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	9	100,668	80,883
Հիմնական միջոցներ	10	48,866	55,559
Հետաձգված հարկային ակտիվներ	11	8,133	12,489
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		157,667	148,931
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		9,999	2,142
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	757,643	991,253
Ավանդներ բանկերում	13	948,839	-
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	14	1,246,076	846,405
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	526,898	477,722
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		3,489,455	2,317,522
Ընդամենը ակտիվներ		3,647,122	2,466,453
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ			
	15		
Բաժնետիրական կապիտալ		265,760	265,760
Լրացուցիչ կապիտալ		61,036	61,036
Գլխավոր պահուստ		39,864	39,864
Չբաշխված շահույթ		2,300,535	1,081,594
Ընդամենը սեփական կապիտալ		2,667,195	1,448,254
Պարտավորություններ			
Ընթացիկ			
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		99,102	237,320
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	880,825	780,879
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		979,927	1,018,199
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,647,122	2,466,453

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մարտի 18-ին:

Կիմ Ավանեսյան

Գլխավոր տնօրեն

Սուսաննա Զարգարյան

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները պետք է քննարկվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-14 միջև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



«ՄոբիԴրամ» վակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններ
31 դեկտեմբերի 2025թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	265,760	61,036	-	243,213	570,009
Տարվա շահույթ	-	-	-	878,245	878,245
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	878,245	878,245
Հատկացում պահուստին	-	-	39,864	(39,864)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	39,864	(39,864)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	265,760	61,036	39,864	1,081,594	1,448,254
Տարվա շահույթ	-	-	-	1,218,941	1,218,941
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	1,218,941	1,218,941
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	265,760	61,036	39,864	2,300,535	2,667,195

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա շահույթ մինչև հարկումը		1,488,716	1,131,066
Ճշգրտումներ¹			
Մաշվածություն և անորոշիզացիա		55,844	39,176
Հիմնական միջոցների օտարումից օգուտ		(100)	(33)
Ակնկալվող պարտքային կորուստների գծով ծախս		20,042	238,277
Ֆինանսական եկամուտ		(102,996)	(28,314)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		5,243	52,514
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		1,466,749	1,432,686
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		253,279	(619,412)
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդների փոփոխություն		(402,015)	(38,631)
Պաշարների փոփոխություն		(7,857)	(497)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		71,489	(444,517)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		1,381,645	329,629
Վճարված շահութահարկ		(403,637)	(50,516)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		978,008	279,113

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2025թ.	2024թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(9,281)	(57,586)
Հիմնական միջոցների օտարում	10	100	33
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(59,655)	(38,466)
Ավանդներ բանկերում		(954,401)	-
Ստացված տոկոսային եկամուտ		102,996	28,314
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(920,241)	(67,705)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ			
		57,767	211,408
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում		477,722	341,054
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		2,989	(72,631)
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխության ազդեցությունը		(11,580)	(2,109)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	14	526,898	477,722

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված
հազար հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

«ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերության հիմնական գործունեությունն է վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը: Ծառայությունների հիմնական տեսակը հանդիսանում է «Վիվա Արմենիա» ՓԲԸ սպասարկման կենտրոններում գտնվող մասնաճյուղերի և բջջային հավելվածի միջոցով կոմունալ վճարումների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, ֆիքսված և բջջային հեռախոսակապի, ինտերնետի ծառայությունների դիմաց վճարումների ընդունումը, դրամական փոխանցումների իրականացումը և այլ վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2011թ-ին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2011թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) թիվ 15 գրանցման վկայականով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության միակ բաժնետերը «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն է:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Արգիշտի փ. 4/1: Ընկերությունն ունի գործող 9 մասնաճյուղեր Երևանում և 9 մասնաճյուղեր ՀՀ մարզերում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմում էր 61 (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 64):

Համապատասխանություն և անընդհատություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է բախվել մի շարք ներքին և արտաքին մարտահրավերների՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ, տարածաշրջանային անվտանգության խնդիրներով և գլոբալ տնտեսության փոփոխվող ռիսկերով: Այնուամենայնիվ, հայկական բիզնեսը աստիճանաբար հարմարվում է նոր պայմաններին՝ դիվերսիֆիկացնելով մատակարարման շղթաները, ընդլայնելով արտահանման շուկաները և կիրառելով առավել ճկուն գործառնական մոդելներ: Ներդրումային միջավայրի բարելավմանն, ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն ու մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված պետական բարեփոխումները ստեղծում են երկարաժամկետ տնտեսական կայունության հիմքեր:

2025թ. Հայաստանի տնտեսության ոլորտային պատկերը հակասական է. մի կողմից շարունակվում է առևտրի, ծառայությունների և շինարարության կայուն աճը, մյուս կողմից դիտվում է արդյունաբերության

նկատելի անկում: Աճող ոլորտները մեծապես շահում են ներմուծման ընդլայնումից, սպառողական ակտիվությունից, ինչպես նաև զբոսաշրջության վերականգնումից, որն ավելացնում է ծառայությունների պահանջարկը: Շինարարության աճը պայմանավորված է ինչպես մասնավոր ներդրումներով, այնպես էլ բնակարանաշինության շարունակական բարձր պահանջարկով, ինչը դարձնում է այն տնտեսության ամենակապակց ճյուղերից մեկը: Ընդհանուր առմամբ, տնտեսության շարժիչ ուժը շարունակում են մնալ սպառման վրա հիմնված ոլորտները:

2025թ. Հայաստանի ֆինանսական ոլորտը, ընդհանուր առմամբ, մնում է կայուն՝ ֆինանսական համակարգի բավարար կապիտալացվածությամբ, իրացվելիության համապատասխան մակարդակներով և ՀՀ Կենտրոնական բանկի շարունակական վերահսկողությամբ պայմանավորված: Չնայած արտաքին ռիսկերի աճին և գլոբալ ֆինանսական անորոշություններին՝ ֆինանսական հաստատությունները շարունակում են առանցքային դեր խաղալ տնտեսական ակտիվության աջակցման գործում:

2025թ. պետական բյուջեի համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը նախատեսված է 5.1%, իսկ 2026թ.՝ 5.4%:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԻ) և ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

<<ՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԻ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

- ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

2024թ. ապրիլին ՀՀՄՍԻ-ն հրապարակել է ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՖՀՄՄ 18-ը ներառում է ՀՀՄՄ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը
- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ
- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ
- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»:

Ի հավելում, ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՀՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՀՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Ընկերությունը ներկայումս գնահատում է ՀՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- «Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր» (ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)
- ՀՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության բացահայտումներ» (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

4.1 Պատրաստման հիմքերը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍՄ) կողմից հրապարակված ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով: Ֆինանսական գործիքները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

Համադրելի տեղեկատվություն

Համադրելի տեղեկատվությունը վերադասակարգվել է՝ հաշվետու ժամանակաշրջանի ներկայացման փոփոխությունների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման հիմնական փոփոխությունը հանդիսանում է «Բանկային ծառայությունների վճարներ» և «Գործակալներին վճարված միջնորդավճարներ» տողերը մեկ՝ «Կոմիսիոն վճարների տեսքով ծախսեր», տողում ներկայացումը:

4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ծախսերի հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Ընկերությունը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Ընկերության ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (<< դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: << դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
<< դրամ/1 Եվրո	449.01	413.89
<< դրամ/1 ՌՈՒԲ	4.87	3.71

4.4 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում վճարահաշվարկային ծառայությունների մատուցումից միջնորդավճարներից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-բայլի գործընթացով:

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի զինը
4. Բաշխել գործարքի զինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություններ վճարահաշվարկային գործառնությունների գծով (տե՛ս Ծանոթագրություն 16): Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Վճարահաշվարկային ծառայություններ

Վճարահաշվարկային ծառայությունները մասնավորապես ներառում են՝

- հայկական դրամով կամ արտարժույթով վճարողներից որպես ձեռնարկատիրական գործունեություն վճարումների ընդունումը շահառուին ցանկացած եղանակով անմիջականորեն կամ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող այլ անձի միջոցով վճարելու նպատակով կամ հայկական դրամով կամ արտարժույթով շահառուներին որպես ձեռնարկատիրական գործունեություն վճարումների կատարումն այդ անձանց օգտին ցանկացած եղանակով ստացված միջոցների հաշվին:
- երրորդ անձանց համար դրամարկղային գործառնությունների իրականացումը
- պրոցեսինգի և քլիրինգի իրականացումը

Վճարումների ընդունման, կանխիկացման և դրամական փոխանցումների ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցման հետ մեկտեղ: Ծառայությունների մատուցման ընթացքը չափվում է ընդունված վճարումների, կանխիկացման գործառնությունների և դրամական փոխանցումների ծավալի հիման վրա:

Սպասարկման ծառայություններից ստացվող հասույթը հիմնականում ներառում է ծառայություններից օգտվելու համար կատարվող հաստատագրված ամսական վճարները և ճանաչվում է ժամանակի ընթացքում ծառայությունների մատուցման հետ մեկտեղ՝ անցած ժամանակը կիրառելով որպես ծառայությունների մատուցման ընթացքի չափման միավոր:

Ընկերության կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների հաշվառումն իրականացվում է Ընկերության պրոցեսինգային, տեխնիկական և այլ բաժինների կողմից ներկայացրած հաշվետվությունների և այլ գրավոր ներկայացումների հիման վրա: Վերոհիշյալ հաշվետվությունների և այլ գրավոր ներկայացումները, ըստ ներկայացման ժամկետների, լինում են օրական և ամսական:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ընկերության ոչ նյութական ակտիվները, հիմնականում, բաղկացած են համակարգչային ծրագրերից:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-10 տարի (համակարգչային ծրագրեր և այլ ոչ նյութական ակտիվներ):

4.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի
Համակարգչային տեխնիկա (բացառությամբ սերվերների և ցանցային սարքավորումների)	3 տարի
Սերվերներ և ցանցային սարքավորումներ	5 տարի
Այլ	8 տարի

4.7 Վարձակալված ակտիվներ

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունը իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունը իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունը իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը իր բոլոր վարձակալության պայմանագրերը որոշակիացրել է որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն՝ կիրառելով օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

4.8 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը

հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

4.9 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Ընկերությունը չունի որպես իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական եկամուտներում կամ ֆինանսական ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 20.1-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները (այդ թվում օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ), ավանդները բանկերում, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեքը

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեքը կմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»:

Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ Ընկերությունը գրանցում է ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում հաշվառվող բոլոր ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստները: Ակնկալվող պարտքային կորուստները հիմնված են պայմանագրային դրամական միջոցների և այն դրամական հոսքերի միջև տարբերության վրա, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ: Պակասուրդը զեղչվում է ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքին մոտ տոկոսադրույքով:

ՖՀՄՍ 9-ի արժեքը կման պահանջների կիրառման մանրամասն վերլուծության համար տե՛ս Ծանոթագրություն 21.2-ում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 20.1-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.10 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ

արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.12 Ծախսատեսություն

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին և սեփական տերմինալներում:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համար-ժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.14 Ավանդներ բանկերում

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ավանդային հաշիվներ: Ֆիքսված 90 օր և ավել մարման ժամկետով բանկերում ավանդները հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Բանկերում ավանդները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.15 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը:

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալը Ընկերության բաժնետիրոջից ներգրավված փոխառության իրական և անվանական արժեքների տարբերությունն է, որը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ:

Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալը ստեղծված է համաձայն << օրենսդրության պահանջների՝ ընդհանուր պարտքային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս, քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

Զբաղխված շահույթ

Զբաղխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով հասարակ բաժնետոմսերի գծով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

4.16 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարզևավճարներ

Պարզևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.17 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4.17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատումը:

4.17.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման մոդելներ: Սա ներառում է գնահատումների և ենթադրությունների մշակում համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է ձեռք բերվել անհատական գործարքների դեպքում (տե՛ս Ծանոթագրություն 22):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների օգտագործման փորձի հիման վրա դատողության արդյունք է: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող մաշվածությունը:

Ֆինանսական ակտիվների արժեքիում

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս Ծանոթագրություն 21.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները:

Հարկային օրենսդրություն

<< հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների (տե՛ս Ծանոթագրություն 19-ը):

5 Հասույթ մատուցված ծառայություններից

Հասույթն առաջանում է վճարահաշվարկային ծառայությունների մատուցման դիմաց ստացված միջնորդավճարներից:

	2025թ.	2024թ.
Կոմունալ վճարումներից	84,386	121,817
Վարկերի մարումներից	6,161	15,920
Բանկերին և այլ ֆինանսական ընկերություններին մատուցված ծառայություններից	3,493,554	3,129,039
Խաղերի վճարումներից	4,187	57,101
Առաքման ծառայություններից	3,949	5,213
Միջազգային դրամական փոխանցումներից	1,270	2,494
Էլեկտրոնային փողերից	1,140	1,504
Բժշկական հաստատություններում վճարումներից	34,817	20,697
Այլ	26,263	27,700
Ընդամենը հասույթ մատուցված ծառայություններից	3,655,727	3,381,485

6 Այլ գործառնական ծախսեր

	2025թ.	2024թ.
Տերմինային սպասարկում	8,820	4,705
Դրամական միջոցների հավաքագրում	10,270	10,634
Գործառնական վարձակալություն	2,210	3,955
Այլ տերմինային օգտագործման համար	8,320	8,854
Ծառայությունների մատուցում	1,567	1,482
Փոստի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	2,959	3,006
Գրասենյակային ծախսեր	4,179	1,906
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	17,963	3,961
Մարքեթինգի և գովազդային ծախսեր	1,200	1,322
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	3,425	3,254
Գործուղման ծախսեր	6,386	3,020
Այլ	10,278	6,603
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	77,577	52,702

7 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

	2025թ.	2024թ.
*Արտարժույթի առք ու վաճառքից զուտ վնաս	(659,746)	(729,775)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(659,746)	(729,775)
Տոկոսային եկամուտ բանկային ավանդներից և բանկային հաշիվներից	102,996	28,314
Ընդամենը ֆինանսական եկամուտ	102,966	28,314
Զուտ ֆինանսական ծախսեր	(556,780)	(701,461)

*Արտարժույթի առք ու վաճառքից զուտ վնաս առաջանում է վճարահաշվարկային այն ծառայություններից, որոնց դեպքում հաճախորդներից, արտարժույթով ստացված գումարները փոխարկվում են << դրամի վերջնական շահառուին փոխանցելու համար:

8 Շահութահարկի գծով ծախս

	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	263,259	263,960
Ընթացիկ տարում ճանաչված՝ նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	2,160	-
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 11)	4,356	(11,139)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	269,775	252,821

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,488,716	-	1,131,066	-
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	267,969	18	203,592	18
Արտարժույթի (դրական) բացասական փոխարժեքային տարբերություն	(13,207)	(1)	9,453	1
Զուտ չնվազեցվող ծախսեր	15,013	1	39,776	4
Շահութահարկի գծով ծախս	269,775	18	252,821	23

9 Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	156,700	2,535	159,235
Ավելացում	38,466	-	38,466
Օտարում	(5,475)	-	(5,475)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	189,691	2,535	192,226
Ավելացում	59,655	-	59,655
Օտարում	(8,896)	-	(8,896)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	240,450	2,535	242,985
Կուտակված ամորտիզացիա			
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	93,839	2,363	96,202
Տարվա հաշվարկ	20,486	130	20,616
Օտարման հետևանքով դուրսգրում	(5,475)	-	(5,475)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	108,850	2,493	111,343
Տարվա հաշվարկ	39,864	6	39,870
Օտարման հետևանքով դուրսգրում	(8,896)	-	(8,896)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	139,818	2,499	142,317
Հաշվեկշռային արժեք			
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	80,841	42	80,883
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,632	36	100,668

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների (2024թ.՝ նույնպես):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 43,926 հազար << դրամ (2024թ.՝ 52,822 հազար << դրամ):

10 Հիմնական միջոցներ

	Մեքենաներ և սարքավորումներ	Համակարգչային տեխնիկա (ներառյալ սերվերներ)	Փոխադրա- միջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	53,218	70,551	-	10,250	134,019
Ավելացում	282	57,304	-	-	57,586
Օտարում*	-	(657)	-	(189)	(846)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	53,500	127,198	-	10,061	190,759
Ավելացում	1,574	107	7,600	-	9,281
Օտարում*	(42)	(8,414)	-	(206)	(8,662)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	55,032	118,891	7,600	9,855	191,378
Կուրակված մաշվածություն և արժեզրկում					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	39,832	69,985	-	7,669	117,486
Տարվա հաշվարկ	5,856	11,483	-	1,221	18,560
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(657)	-	(189)	(846)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,688	80,811	-	8,701	135,200
Տարվա հաշվարկ	3,593	11,761	148	472	15,974
Օտարման հետևանքով դուրսգրում	(42)	(8,414)	-	(206)	(8,662)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	49,239	84,158	148	8,967	142,512
Հաշվեկշռային արժեք					
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,812	46,387	-	1,360	55,559
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,793	34,733	7,452	888	48,866

*2025թ. Ընկերությունը վաճառել է դուրս գրված հիմնական միջոցներ, զուտ արդյունքը տվյալ գործարքից կազմել է 100 հազար << դրամ (2024թ.՝ 33 հազար << դրամ), որը ճանաչվել է որպես այլ եկամուտ:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 87,382 հազար << դրամ (2024թ.՝ 96,044 հազար << դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2024թ.՝ նույնպես):

11 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Տարեսկզբի մնացորդ	12,489	1,350
Շահույթում կամ վնասում ճանաչված (փոխհատուցում) ծախս (տե՛ս Ծանոթագրություն 8)	(4,356)	11,139
Տարեվերջի մնացորդ	8,133	12,489

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2025թ.				
	2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Չուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	1,649	857	2,506	2,506	-
Ավանդներ բանկերում	-	1,001	1,001	1,001	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,840	(10,740)	100	100	-
Ոչ նյութական ակտիվներ	-	1,579	1,579	1,579	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	2,947	2,947	2,947	-
Հետաձգված հարկային ակտիվ	12,489	(4,356)	8,133	8,133	-

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	2024թ.				
	2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Չուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	1,350	299	1,649	1,649	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	10,840	10,840	10,840	-
Հետաձգված հարկային ակտիվ	1,350	11,139	12,489	12,489	-

12 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ֆինանսական ակտիվներ		
Էլեկտրոնային փողերի գծով ստացվելիք գումարներ	5,525	96,213
Փոխանցումների գծով դեբիտորական պարտքեր	686,668	790,320
Վճարահաշվարկայինի գծով դեբիտորական պարտքեր	20,896	21,774
	713,089	908,307
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(3,935)	(3,379)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	709,154	904,928
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Կանխավճարներ	47,949	86,010
Այլ դեբիտորական պարտքեր	540	315
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	48,489	86,325
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	757,643	991,253

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Դեբիտորական պարտքերի համար ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ.	2024թ.
Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ	3,379	-
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	556	231,142
Տարվա ընթացքում դեբիտորական պարտքերի դուրսգրում	-	(227,763)
Կորուստների գծով պահուստ, տարեվերջի մնացորդ	3,935	3,379

Ծանոթագրություն 21.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս Ծանոթագրություն 21.1՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արտարժույթային բացահայտման համար:

13 Ավանդներ բանկերում

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ավանդներ բանկերում	954,401	-
	954,401	-
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(5,562)	-
Ընդամենը ավանդներ բանկերում	948,839	-

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավանդները ներդրված են մեկ բանկում:

Ավանդները բանկում ունեն 90 օրից ավել մարման ժամկետ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերում ավանդների միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 9.28%:

Բանկերում ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի համադրումը ներկայացված է ստորև.

	, 2025թ.	, 2024թ.
Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ	-	-
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	5,562	-
Կորուստների գծով պահուստ, տարեվերջի մնացորդ	5,562	-

Ծանոթագրություն 21.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Դրամական միջոցներ առևտրային բանկերում	371,439	319,024
Դրամական միջոցներ դրամարկղում	33,752	47,228
Դրամական միջոցներ ճանապարհին	46,990	52,489
Դրամական միջոցներ տերմինալներում	90,495	63,179
	542,676	481,920
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(15,778)	(4,198)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	526,898	477,722
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	1,253,382	851,367
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ	(7,306)	(4,962)
Ընդամենը օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	1,246,076	846,405

Օգտագործման սահմանափակումով հաշիվներն իրենցից ներկայացնում են բանկերում պահվող հատուկ հաշիվներ: Ցանկացած պահի այս հաշիվների մնացորդները չպետք է պակաս լինեն նախորդ օրվա ընդունված վճարումների ընդհանուր գումարից: Այս հաշիվների մնացորդները կարող են օգտագործվել միայն վճարումների ընդունման ծառայությունների շրջանակում վճարումներ կատարելու համար:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքների և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի համադրումը ներկայացված է ստորև.

	2025թ. Փուլ 1	2024թ. Փուլ 1
Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ	9,160	7,501
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	13,924	7,135
Տարվա ընթացքում դուրսգրում	-	(5,476)
Կորուստների գծով պահուստ, տարեվերջի մնացորդ	23,084	9,160

Ծանոթագրություն 21.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներում 299,828 հազար դրամ գումարով (92.9%) հաշիվները կենտրոնացված են երկու բանկում (2024թ.՝ 238,856 հազար ՀՀ դրամ (74.9%) երկու բանկում):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օգտագործման սահմանափակում հաշիվների մնացորդներում 1,140,630 հազար ՀՀ դրամ գումարով (91%) հաշիվները կենտրոնացված են մեկ բանկում (2024թ.՝ 843,489 հազար ՀՀ դրամ (99.1%) երկու բանկում):

Դրամական միջոցները ճանապարհին իրենցից ներկայացնում են Ընկերության աշխատակից ինկասատորների, այլ ինկասացիոն կազմակերպությունների և գործակալների կողմից տեղումնալներից և Ընկերության մասնաճյուղերից ինկասացված և բանկային հաշիվներին մուտքագրված, սակայն բանկերի կողմից դեռևս չհաշվառված գումարները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդների արտարժույթային և պարտքային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

15 Սեփական կապիտալ

15.1 Բաժնետիրական կապիտալ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 265,760 հազար ՀՀ դրամ (2024թ.՝ 265,760 հազար ՀՀ դրամ):

Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,208,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 220 դրամ անվանական արժեքով:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31 դրությամբ Ընկերության 100% բաժնետեր հանդիսանում է «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2024թ.՝ նույնպես):

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում:

15.2 Լրացուցիչ կապիտալ

Ընկերության բաժնետիրոջից ստացված շուկայականից ցածր տոկոսով փոխառությունների իրական և պայմանագրային արժեքների միջև տարբերությունը՝ 61,036 հազար ՀՀ դրամը, ճանաչվել է սեփական կապիտալում, որպես լրացուցիչ կապիտալ:

15.3 Պահուստային կապիտալ

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով:

16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	10,905	12,333
Վճարահաշվարկային գործառնությունների գծով	778,798	475,403
Հաճախորդների նկատմամբ էլեկտրոնային փողերի գծով	27,163	58,720
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	16,370	12,619
Ստացված կանխավճարներ վճարահաշվարկային գործառնությունների գծով	22,107	204,304
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	855,343	763,379
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	8,685	5,515
Այլ պարտավորություններ	16,797	11,985
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	880,825	780,879

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի արտարժույթային և իրացվելիության ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է Ծանոթագրություն 21-ում:

17 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության միակ բաժնետիրոջը, հիմնական ղեկավար անձնակազմը:

17.1 Վերահսկողություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վերջնական վերահսկողը Չժե Ժանգն է: Նրան է պատկանում Կիպրոսում գրանցված «Ֆեդիլթի Գրուպ Լիմիթեդ»-ի 75%-ը, իսկ վերջինս հանդիսանում է Ընկերության Մայր կազմակերպության՝ Վիվա Արմենիա ՓԲԸ-ի, միակ բաժնետերը:

17.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2025թ.	2024թ.
Մայր ընկերություն		
Ծառայությունների մատուցում	89,042	112,118
Ստացված ծառայություններ	(10,156)	(9,607)

Մնացորդներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Մայր ընկերություն		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,852	8,841
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(20,510)	(22,031)

17.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները «Վիվա Արմենիա» ՓԲԸ կանոնադրական կապիտալում մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Անձնակազմի գծով ծախսեր» հոդվածում.

	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	13,107	7,980
Ընդամենը	13,107	7,980

18 Պարտավորվածություններ

18.1 Իրավական պարտավորվածություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

19 Պայմանականություններ

19.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ընկերությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ընկերությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

20.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.9-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	709,154	904,928
Ավանդներ բանկերում	948,839	-
Օգտագործման սահմանափակում հաշիվների մնացորդներ	1,246,076	846,405
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	526,898	477,722
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	3,430,967	2,229,055

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	855,343	763,379
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	855,343	763,379

21 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքովաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

21.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն իրականացնում է գործարքներ արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացույցված գումարները փոխարկվում են հայկական դրամի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

31 դեկտեմբերի 2025թ.	ԱՄՆ դոլլար	Եվրո	Ռուսական ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Վճարահաշվարկայինի գծով դեբիտորական պարտքեր	2,716	1	697,124
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	-	-	208
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,943	8,518	252,722
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	24,659	8,519	950,054
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,966	12	15,419
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,966	12	15,419
Զուտ արդյունք	20,693	8,507	934,635
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	102,426	5,205	312,194
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	6,760	-	142,782
Զուտ դիրք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	95,666	5,205	169,412

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլիի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճի կամ նվազման դեպքում: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուսական ռուբլիի ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	2,069	9,567	851	521	93,464	16,941
Սեփական կապիտալի այլ տարրեր	2,069	9,567	851	521	93,464	16,941

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված օտարերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

21.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Ընկերության ղեկավարությունը զգուշորեն կառավարում է պարտքային ռիսկը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից: Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը ներառում է մոդելների օգտագործում, քանի որ ռիսկը տատանվում է՝ կախված շուկայական պայմաններից, դրամական միջոցների ակնկալվող հոսքերից և ժամանակի ընթացքից:

Ակնկալվող պարտքային կորուստների մոտեցումն օգտագործում է երեք փուլ՝ արժեզրկումից կորուստների բաշխման համար:

Փուլ 1. Ակնկալվող պարտքային կորուստներ հաջորդ տասներկու ամսվա ընթացքում

Փուլ 1-ը ներառում է բոլոր այն պայմանագրերը, որոնց սկզբնական ճանաչումից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճ չկա, և սովորաբար պարունակում է նոր պայմանագրեր, որոնք ժամկետանց են 31 օրից պակաս: Ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որը վերաբերում է պարտազանցման դեպքերին, որոնք հնարավոր են առաջիկա 12 ամիսների ընթացքում:

Փուլ 2. գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ – պարտքային արժեզրկման բացակայություն

Եթե ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչումից ի վեր ունի պարտքային ռիսկի զգալի աճ, սակայն դեռևս պարտքային արժեզրկում չի եղել, այն տեղափոխվում է փուլ 2 և չափվում գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի ժամանակ: Սա սահմանվում է որպես ակնկալվող պարտքային կորուստ, որը բխում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ընթացքում բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամեն դեպքում, Ընկերությունը գտնում է, որ տեղի է ունեցել պարտքային ռիսկի զգալի աճ, երբ պայմանագրային վճարումը ժամկետանց է ավելի քան 31 օր:

Փուլ 3. գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ – պարտքային արժեզրկման առկայություն

Եթե ֆինանսական ակտիվը սահմանվում է որպես պարտքային առումով արժեզրկված կամ պարտազանցման վիճակում գտնվող, այն տեղափոխվում է փուլ 3 և չափվում է գործողության ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի ժամանակ: Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվի օբյեկտիվ ապացույցները ներառում են 90 ժամկետանց օր, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս պայմանագրային գործընկերոջ նշանակալի ֆինանսական դժվարությունները: Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է պարտազանցման վիճակում, երբ հավանական չէ, որ պայմանագրային գործընկերն ամբողջությամբ կվճարի Ընկերության նկատմամբ իր պարտավորությունները՝ առանց Ընկերության կողմից այնպիսի գործողությունների դիմելու, ինչպիսին է երաշխիքի իրացումը (եթե այդպիսիք կան):

Այն հանգամանքի որոշելը, թե արդյոք ֆինանսական ակտիվը կրել է պարտքային ռիսկի նշանակալի աճ, թե ոչ, հիմնված է պարտազանցման հավանականության գնահատման վրա, որը կատարվում է առնվազն ամսական մեկ անգամ՝ ներառելով արտաքին վարկանիշային տոկոսադրույքի վերաբերյալ տեղեկությունը, ինչպես նաև ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի վերաբերյալ ներքին տեղեկությունը:

Ֆինանսական կազմակերպություններից դեբիտորական պարտքեր չհանդիսացող ֆինանսական ակտիվների համար պարտքային ռիսկի զգալի աճը գնահատվում է հիմնականում ժամկետանց տեղեկությունների հիման վրա:

Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդները, բանկերում ավանդներից և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Բանկային մնացորդներ և ավանդներ

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է հաշիվները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքը: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար դեբիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2025թ. հունվարի 1-ին համապատասխանաբար նախորդող ժամանակահատվածում ձևավորված պատմական պարտքային կորուստների վրա: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

21.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում:

Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները << կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան, այն է՝ էլեկտրոնային փող թողարկող վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև հարաբերակցությունը պետք է կազմի 100 տոկոս:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտի չենթարկված	
	2025թ., %	2024թ., %
Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	219.46	134.21

<< կենտրոնական բանկի խորհրդի 2026թ. հունվարի 13-ի որոշմամբ, որը ուժի մեջ է մտնելու 2026թ սեպտեմբերի 1-ից սահմանվել է, որ իրացվելիության նորմատիվը պետք է ծածկի ընթացիկ պարտավորությունների 60%-ը, սակայն ոչ պակաս, քան վճարահաշվարկային կազմակերպության հաճախորդների հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների մեծությունը:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

	31 դեկտեմբերի 2025թ.			
	Մինչև 1 ամիս	1 - 12 ամիս	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	838,973	16,370	855,343	855,343
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	838,973	16,370	855,343	855,343

	31 դեկտեմբերի 2024թ.			
	Մինչև 1 ամիս	1 - 12 ամիս	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	750,760	12,619	763,379	763,379
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	750,760	12,619	763,379	763,379

22 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

22.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

	31 դեկտեմբերի 2025թ.		
	Մակարդակ 2	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	709,154	709,154	709,154
Ավանդներ բանկերում	948,839	948,839	948,839
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	1,246,076	1,246,076	1,246,076
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	526,898	526,898	526,898
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	855,343	855,343	855,343

	31 դեկտեմբերի 2024թ.		
	Մակարդակ 2	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	904,928	904,928	904,928
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	477,722	477,722	477,722
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	846,405	846,405	846,405
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	763,379	763,379	763,379

Առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք և ստացվելիք գումարների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ և բանկերում ավանդներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդները և բանկերում ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրամական միջոցների և դրանց համարժեքների, օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդների և բանկերում ավանդների հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

23 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է << կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոններով և նորմատիվներով:

<< կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 100,000 հազար << դրամի չափով:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը (ընդ որում, բաժնետիրական կապիտալի ոչ նյութական ակտիվներով համալրված մասը ընդհանուր կապիտալի հաշվարկին մասնակցում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի՝ 100,000 հազար << դրամի 25 տոկոսի չափով) կուտակված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը:

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն << կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտի չենթարկված	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հիմնական կապիտալ	704,264	664,400
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	704,264	664,400

<< կենտրոնական բանկի խորհրդի 2026թ. հունվարի 13-ի որոշմամբ, որը ուժի մեջ է մտնելու 2026թ սեպտեմբերի 1-ից, կատարվել է կապիտալի հաշվարկման մեթոդաբանության փոփոխություն, համաձայն որի վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալը նրա առաջին և երկրորդ մակարդակի կապիտալների հանրագումարն է: Ընդ որում՝ երկրորդ մակարդակի կապիտալը պետք է փոքր կամ հավասար լինի առաջին մակարդակի կապիտալի մեկ երրորդին:

Վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի կապիտալը վճարահաշվարկային կազմակերպության՝ առաջին մակարդակի հիմնական կապիտալի և առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հանրագումարն է՝ համապատասխան նվազեցումները և ճշգրտումները կատարելուց հետո: Ընդ որում՝ առաջին մակարդակի կապիտալի նվազագույնը 75%-ը պետք է արտահայտված լինի առաջին մակարդակի հիմնական կապիտալի տեսքով: